ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը
Լուսինե Իգիթյան

Զբաղեցրած պաշտոնը
ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության պետի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները
Չինաստանի Հանրապետություն (Սուչժոու), մայիսի 26-ից հունիսի 4-ը, 2026 թ.

Հրավիրող կողմը
ICCROM-IUCN World Heritage, Չինաստանի ազգային մշակութային ժառանգության վարչակազմ, Ասիայում մշակութային ժառանգության դաշինք և Չինաստանի մշակութային ժառանգության ակադեմիա

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսվող գործուղումը)
«Կառավարելով մշակութային ժառանգությունը. ժողովուրդ, բնություն, մշակույթ 2026թ.» խորագրով դասընթացին մասնակցելու նպատակով:

Քննարկված թեմաները
Դասընթացի թեմաներն էին՝

1. ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության դերն ու նշանակությունը,
2. Հուշարձանների կառավարման արդյունավետության աջակցության հնարավորությունները՝ համաձայն գնահատման չափորոշիչների (OUV),
3. Հուշարձանի արժեքների և հատկանիշների չափորոշիչները՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկ ընդգրկելու համար,
4. Հուշարձանի նշանակությունը և պատճառները՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկ ընդգրկելու նպատակով,
5. Հուշարձանի պահպանական գոտիների և սահմանների որոշման չափորոշիչները՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկ ընդգրկելու համար,
6. Դերակատարների և համայնքների ընդգրկվածությունը,
7. Հուշարձանի կառավարման պլանի կազմման քայլերը և դրա իրականացումը,
8. Ռիսկերի կառավարումը և կլիմայի փոփոխման ազդեցությունը, դրանց մշտադիտարկման չափորոշիչները,

9. Խմբային սահիկաշարի կազմում տրված հուշարձանի համար՝ դասընթացում սովորած նյութերի ամրապնդման նպատակով:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Դասընթացը նախատեսված էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում արդեն իսկ ընդգրկված և ընդգրկման համար նախատեսված հուշարձանների կառավարման պլանների կազմման և իրականացման քայլ առ քայլ աշխատանքներին Դասընթացի ընթացքում քննարկվել են և գործնական աշխատանքներ են կատարվել յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ թիմային աշխատանքների տեսքով: Նշյալ դասընթացին մասնակցում էին 35 երկրներից ներկայացուցիչներ, որոնց հետ ևս տեղի ունեցան ոչ ֆորմալ հանդիպումներ, հուշարձանների պահպանության խնդիրներին միտված փորձի փոխանակման վերաբերյալ քննարկումներ:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Դասընթացը կարևոր է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում Հայաստանից ընդգրկված հուշարձանների կառավարման պլանների կազմման աշխատանքների համար, և ամենակարևորը, դրանց իրականացման աշխատանքների համար, ինչպես պահանջում է ՅՈՒՆԵՍԿՕ-ն: Հայաստանի կողմից ՅՈՒՆԵՍԿՕ-ի հիմնական ցանկում ընդգրկված հուշարձանների համար կառավարման պլանները ներկայացվել են դեռևս 2023 թ., սակայն դրանք դեռ չեն իրականացվել, իսկ նշյալ դասընթացի արդյունքում հնարավոր կլինի ստացված գիտելիքները կիրառել հուշարձանների կառավարման պլանների իրականացման համար: Դասընթացի արդյունքներից ստացված մյուս հմտությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության նախնական ցանկում ընդգրկված հուշարձանների՝ հիմնական ցանկ տեղափոխման աշխատանքների գործընթացի կազմակերպումն ու իրականացումն է: Այսպես, նախատեսվում է առաջիկա տարիներին հիմնական ցանկում ունենալ Տիրինկատարի վիշապաքարերը և սրբազան լանդշաֆտը հուշարձանը, որի աշխատանքներն ընթացքում են:

Ստորագրությունը, ամսաթիվը

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ, «ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ ԵՎ ԱՋԱՏ ԳԵՏԻ ԿԻՐՃԸ» ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ՝ **ԼՈՒՍԻՆԵ ԻԳԻԹՅԱՆ**